



ՀԱՅԲԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 171

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1914

ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՆԻ



ՏՕՂԱՑՈՅՑ

- | | |
|---|---|
| <p>Նոյեմբեր 1 † Կիր. թկ.</p> <p>2 Բշ. զձ.</p> <p>3 Դշ. զկ.</p> <p>4 Դշ. զձ.</p> <p>5 Եշ. զկ.</p> <p>6 Ուր. աձ.</p> <p>7 Շք. ալ.</p> | <p>Ը. Զկնի Խաչին:</p> <p>Տօն ամենայն սրբոց :</p> <p>Ս. Ակիփսիմեայ եպիսկոպոսին եւ Յովսեփայ քահանային եւ Այիքալայ սարկաւազին եւ Պղատոնի վկային:</p> <p>Պահոց:</p> <p>Ս. Հայրապետացն Մեսրոփանոսի, Աղեփանդոսի եւ Պօղոսի խոստովանողին եւ Ս. Նօսարացն Մարկիանոսի եւ Մարտիրոսի:</p> <p>Պահոց :</p> <p>Ս. Հրեհակապետացն Գաբրիէլի եւ Միֆայէլի եւ ամենայն երկնային զօրաց:</p> |
|---|---|



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Զորրոդ սարի 31 Հոկտեմբեր 1914 Թիւ 171

«Մերազան Բահանայուպեսն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շարքաքերը բա-
նւնակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
արել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շարքաքերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարդ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեման Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բռնահամարաւ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՍԻՒՆ ՀՈԴՈՍ

Ամենամեծ գոհունակութեամբ է որ
Կ. Արձագանգ կը հրատարակէ այսօր
այն Կաթողիկոսական Կոնդակը, որով
1911 թուական մէջ ի Հոռոմ գումա-
րուած ազգային Պատրիարքական Սիւն-
հոդոսը պաշտօնապէս կը հրատարակուի,
իբր եկեղեցական Օրինագիրք Հայ Կա-
թողիկէ Հասարակութեան:

Յիրաւի բարեբախտութիւն մըն է որ
կը վիճակի ներկայ Ժամանակիս, Բա-

հանայայտեցական հաստատութեան շնոր-
հիւ ունենալ այնպիսի Մասեան մը որ
վերջնականապէս կը սահմանէ ամենուն
պատրիարքն ու իրաւունքները: Այն ազգե-
րը՝ որոնք որոշ եւ հաստատուն օրինագիրք
մը ունին, ամենամեծ դիւրութեամբ կը
պահպանեն բարեկարգութիւնը, առանց
ընդդիմութեան կը հպատակին օրինաց
եւ կանոնաց, որով եւ կը յառաջադիմեն
թէ՛ ի հոգեւորին եւ թէ՛ ի բարոյակա-
նին եւ նոյն իսկ ի քաղաքակրթութեան:

Արդ, ցնծագին արհիւ առեւելոյ այս
բարեկարգ դէպքը, յոյ՛ մանաւանդ
վստահութիւն կը սածենք որ անով նոր
եւ բարեշնչող ջրջան մը պիտի սկսի
հասարակութեան համար:



ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՇԱՌԱՅ
ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐԶԵԱՆ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀԻՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սիրեցեալ Որդւոց Մերոց ի Քրիստոս Դեր, Դեր, աշխարհական եւ կրօնաւոր Գահանայից եւ սլա-
 տուական Կաթողիկէ ժողովրդեան Աւագ Թեմիս եւ Պատրիարքական Աթոռէն կախումս ունեցող ժողովր-
 դապետութեանց՝ Ողջոյն եւ Աստուածաւանդ Օրհնութիւն:

Սիրեցեալ Որդեակք ի Քրիստոս,

Երանօթ է Ձեզ ամենուր թէ՛ Աստուածային՝ նախախնամութեամբ եւ Երջանկայիշատակ Պիոս Ժ.
 Սրբազան Գահանայապետին շնորհիւ եւ կարգադրութեամբ, 1911 տարւոյ ընթացքին մէջ ի Հռոմ գումա-
 րուած մեր Աղգային Պատրիարքական Սիւնհոգոսին գործերը արդէն քահանայապետական դերագոյն իշ-
 խանութեամբ հաստատուեցան ի 25 Յունիսի 1913, որով սոյն Մատեանը եկեղեցական օրինագիրք եղաւ
 եւ է՝ Մեր բովանդակ հասարակութեան համար:

Ամէնքս ալ վերահասու ըլլալով որ այս Սիւնհոգոսը մեզի համար նոր եւ բարեյաջող Դարագլուխ
 մը եղած է եւ նոր վարդապետութիւն եւ բարգաւաճում տնտի յառաջ բերէ մեր հասարակութեան մէջ, սէտք
 է մեր անկեղծ երախտագիտութեան զգացումները մատուցանենք յոռո գահայից Բարձրեւոյն Աստուծոյ
 եւ անկեղծօրէն աշխատինք օգտուելու անոր տրամադրութիւններէն: Սակայն նոյն Սիւնհոգոսը սահմա-
 նած է, թէ անոր պարունակած Սիւնհոգոսական վճիռները՝ Առաքելական Գահէն հաստատուելէ վերջ,
 տպագրուին եւ նախ Պատրիարքական Աթոռանիստ եկեղեցւոյ եւ ապա Պատրիարքութեան Վիճակաց
 գլխաւոր եկեղեցիներուն մէջ հրատարակուին: Եւ այս հրատարակութեան օրէն երկու ամիս վերջը այն
 եկեղեցական Օրինագիրքը մեզի համար պարտաւորիչ կանոն ըլլայ եւ ամէնքը գիտնան որ նոյն վճիռնե-
 րով պարաւանդուած են եւ եթէ երբեք ասոնց հակառակ գործեն, անոնց մէջ սահմանուած եկեղեցական
 պատիժներու ենթարկուին:

Հետեւաբար՝ քանի որ վերոյիշեալ Սիւնհոգոսական գործոց սահմանները արդէն տպուած եւ Ս.
 Աթոռոյ կողմէն արդէն հրատարակուած են, Մենք ալ ըստ վճռոյ Սիւնհոգոսին Մեր պարտքը կատա-
 րելու համար, ներկայիւ Մեր Աթոռանիստ եկեղեցւոյն մէջ այս օրէս հրատարակուած կը հռչակեմք
 1911 տարուան մէջ գումարուած Աղգային Պատրիարքական Սիւնհոգոսին գործերը ու վճիռները, եւ կը
 յայտարարեմք թէ անոնք Կ. Պոլսոյ Աւագ Թեմին եւ ուղղակի Պատրիարքէն կախում ունեցող ժողովրդ-
 դապետութեանց համար պարտաւորիչ եկեղեցական Օրինագիրք են՝ ի սկսածնել առաջիկայ տարւոյս, այս է
 յառաջնում իսկ աւուր Ծուռուարի 1915:

Տուեալ ի Կաթողիկոսարանէ Մերմէ որ ի Բերա Կ. Պոլսի, ի 25ում աւուր ամսեանն Հոկտեմբերի,
 յամի 1914 եւ Պատրիարքութեան Մերոյ հիմնեցողութիւն ամի:

† **ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.**
Կ. ՊԱՏՐԻԱՐԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԻՒՆԱՄԵՏ

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Տ Ե Ղ Ա Պ Ա Հ Ի Խ Ն Դ Ի Ր

Ինչպէս ըսինք նախկին յօդուածով,
Արդ. և Կրօնից Նախարարն է որ 1913ին
Դեկտեմբեր¹ ամսուան 6ին Սամաթիոյ
խնդրոյն համար իր քով գնացող երկու
քահանայից առաջարկեց Տեղապահի մը
ընտրութիւնը, իբրեւ լուծում՝ ներկայ
անկանոն կացութեան:

Այս երկու քահանաները, յանկարծ
անակնկալի մը առջեւ դռնուելով,
տատամեցան բնականաբար, սխալ մը
չընելու երկիւղիւ. սակայն Նախարարին
բացարձակ պնդումին վրայ, ընդունեցան
խօսակցութիւնը այդ նիւթին վրայ,
պարզապէս Նախարարին առաջարկին
իմաստը և մանրամասնութիւնները լաւ
ըմբռնելու, և՛ քանի որ իրենք անձեռն-
հաս էին, ա՛յնպէս հաղորդելու համար
ուր որ անկ է: Այս հիման վրայ յայ-
տարարեցին նախ թէ՛

Անկարելի է Տեղապահի մը ընտրու-
թիւնը իբրեւ հոգեւոր պետ հասարա-
կութեան — ինչպէս միշտ կը ճանցուի,
— քանի որ հոգեւոր պետը կեցած էր
արդէն, Ամեն. Թէրզեան Պատրիարքը:

Նախարարը պատասխանեց թէ՛ Օսմ.
Կառավարութիւնը Ամեն. Թէրզեան էֆ.ն
կը ճանչնար հոգեւոր պետ Հայ-Կաթո-
ղիկէ հասարակութեան, տրուած ըլլա-
լով որ զանի այնպէս կը ճանչնայ Ս.
Պապը որ գերագոյն գլուխ է Կաթողի-
կէից. ուստի այս անգամուան Տեղապա-
հի ընտրութեան առաջարկին մէջ բնաւ
չէր նկատուեր հոգեւոր պետի ընտրու-

թիւն, այլ առկա աշխարհական գործոց
համար կառավարութենէ ճանցուած
Եպիսկոպոս Մուրախասի մը ընտրու-
թիւնը: Եւ Նախարարը ջանաց համոզել
թէ այս տեսակ ընտրութիւնը պիտի
խաղաղեցնէր գրգռեալ ոգիները, պիտի
դարմանէր այժմեան ապօրինի դրու-
թիւնը՝ մի քանի աշխարհականներու
վարչութեան, որ նախընթաց բնաւ ու-
նեցած չէ. և եթէ եկեղեցականք չըն-
դունէին այս ընտրութիւնը, իրենք պատ-
ճառ պիտի ըլլային հասարակութեան
ապագայ աղէտից:

— Յայտարարուեցաւ իրեն՝ թէ այս
ընտրութեան համար եկեղեցականաց
և բուն Կաթողիկէ ժողովրդեան Աւա-
գանիին անկարելի էր միանալ ըմբոստ-
ներու ինքնասաց ժողովին հետ, քանի
որ անոնք բանադրուեր են Ս. Պապէն:

Պատասխանեց Նախարարը թէ՛ բնաւ
պէտք չկար այս տեսակ միութեան, և
թէ ինքը արդէն մտածած էր այս դժ-
ուարութեան լուծման միջին եզրը: Նա-
խարարը որոշած էր այս ընտրութիւնը
ընել տալ այսպէս. հասարակութեան
Աւագանիին ցանկերն առնելով, ինքն
անոնց մէջէն պատշաճ տեսածներուն
հրաւէր պիտի գրէր, և յայժմուս պաշ-
տօնի վրայ եղող վեց Եպիսկոպոս Մու-
րախասներէն հինգ հատը ընտրել պի-
տի տար անոնց. և այս հնգանուն ցան-
կը պիտի ղրկէր Կ. Պոլսոյ մէջ գտնուող
հիմակուան Կրօնական Ժողովին որ ու-
նոնցմէ մին պիտի ընտրէր, և մագալա-
թալով պիտի մատուցանէր կառավա-
րութեան, որ պիտի հաստատէր զայն:

— Իրեն ըսուեցաւ թէ այս տեսակ
ընտրութիւն մը դժուարութեանց պիտի
հանդիպէր անշուշտ:

¹ Նախկին յօդուածին մէջ տպ. սխալմամբ Հոկտ. գրուած է:

Նախարարը պատասխանեց թէ՛ ինքն յանձն կ'առնուր հարթել ամէն դժուարութիւն. և թէ աննախընթաց կացութեան մը լուծումը կը գտնուի արտակարգ միջոցներով:

— Դարձեալ ըսուեցաւ իրեն թէ՛ ենթագործելով որ այսպիսի Տեղապահ մը ընտրուելու ըլլայ, նա բնաւ չպիտի կարենայ ճանչնալ հիմնական շփոթումները:

Կրկնեց Նախարարը թէ՛ հարկ չկար զանոնք ճանչնալու, որոնք նովին գործով կը լուծուէին. Տեղապահն օրինաւորապէս ինքը պիտի կազմէր իր ժողովները:

Այս պայմաններու տակն էր ահա՛ որ, ձեռնհաս հոգեւոր Իշխանութիւնը, պահելով զպահելիսն՝ կրցաւ թոյլ տալ սոսկ աշխարհական գործոց համար Տեղապահ Եպիսկոպոսի մը ընտրութիւնը:

3. Հիմա քանի որ խնդիրը այս վիճակի մէջ է, և եկեղեցականութեան վերագրուած ամբաստանութիւնները բոլորովին անհիմն յերկրայէն են, զարմանալ միայն կը մնայ այն սոսկալի աղմուկին, տարածայնութիւններուն, զըրպարութիւններուն վրայ որոնք յարուցուեցան սոյն խնդրին շուրջը. նաև սքանչանալ պէտք է այն նեղմիտ և անհիմաստ առարկութիւններուն, որոնք՝ այլուստ, ո՛չ թէ եկեղեցականութեան, այլ կառավարութեան հասցէին ուղղուած կ'ըլլան անշուշտ:

Սակայն սոյն ընտրութիւնը խափանել կարենալու համար, հակառակորդաց յառաջ բերած միւս պատճառանքը տեսէք ո՛րքան սին է և ունայն:

— «Այս տեսակ ընտրութիւն մը անխորհրդաց չունի»:

Կը պատասխանենք.

1. Շա՛տ լաւ. ի՞նչ կը հետեւի ասկէ. ո՞ր օրէնքը թոյլ չտար Կառավարութեան, կամ ո՞ր իրաւունք կը կաշկանդէ զայն, որ՝ ապօրինի դրութեան մը վերջ տալու համար, բացառիկ պարագաներով դարման մը խորհելու իրաւասութիւն կամ կարողութիւն ունենայ. միթէ նոյն կառավարութիւնը չէ՞ որ՝ ամենեւին նախընթաց չունենալով և կայսերական Փէրմանները մէջտեղ կենալով, Կաթողիկէ թաքրիք մը պաշտօնանկ ըրաւ՝ քանի մը աշխարհականաց դիմումովը. եթէ այն ատեն կարող էր և իրաւասու, հիմա ի՞նչէն ո՛չ...

2. Իրենք են ուրեմն որ այսքան բարակ խիղճ ունին, իրենք, այդ հակառակորդները, որ անխղճօրէն այսպիսի ահաւոր նախընթաց մը ստեղծեցին, որմէ սոսկացին ուրիշ քրիստոնեայ հասարակութիւններ. իրենք՝ որ ամենեւին առանց նախընթացի մի քանի աշխարհականաց ձեռքը թողուցին խեղճ հասարակութեան վարչութիւնը, ի ծանական հասարակութեան, և ստեղծեցին ամենաանկանոն և ամենաապօրինաւոր այս նախընթացը. դեռ ի՞նչ նախընթացներ...

3. Արդէն Տեղապահի ընտրութեան համար բնաւ նախընթաց չկայ: Ասոր համար մասնաւոր կանոն մը կամ յօդուած մըն ալ չկայ: Տեղապահը մեր մէջ է. Պատրիարքական փոխանորդն եղած է միշտ. անգամ մը միայն Տեղապահի ընտրութիւն կատարուած է, բացառիկ պարագաներով, և այն՝ ո՛չ դրէք, իբրեւ Կառավարութեան ճանչցուելիք հոգեւոր պէտ. մինչդեռ ներկայ պարագայիս մէջ բնաւ տեղի չունի այս

էական կէտը: — Եւ պէտք է նաեւ դիտել որ գրեթէ ստուգութիւն մըն է որ այսուհետեւ այս տեսակ բացառիկ պարագայ մը բնաւ չպիտի ներկայանայ:

4. Սրգեօք նախընթաց ունի՞ բանադրեալ ժողովոյ մը վարչութիւնը. նախընթաց ունի՞ արդեօք երկու աշխարհական անհատներու հրաւերը, ու մէկ դի թողով Հոգեւոր իշխանութիւնը, բոլոր Եպ.ները, ամբողջ Նուիրապետութիւնը, Կղերը, և նոյն իսկ իրենցմէ ընդունուած կանոնագրի բոլոր սրամադրութեանց հակառակ՝ իբրեւ թէ Սւազանոյ ժողով ընտրել, որուն ապօրինութիւնները գրած և թուած ենք մեր 154 թիւին մէջ, էջ 417. նախընթաց ունի՞ արդեօք որ այսպիսի ապօրինաւոր ժողով մը՝ առանց գահերէցութեան և մասնակցութեան եկեղեցական իշխանութեան ու կղերին, և հակառակ բացարձակ տրամադրութեան և հաւանութեան նոյն իսկ Կառավարութեան, ձեռնարկէ Տեղապահ եպ.ի ընտրութեան. նախընթաց ունի՞ արդեօք այսպիսի ապօրինաւոր ժողովի մը կողմանէ՝ այսպիսի ապօրինաւոր ընտրութեան մը համար, առանց եկեղեցական Գահերէցութեան, հրաւեր զրկել Կրօնական ժողովոյ Ասեմապետին, այսինքն Փոխան-Գահերէցին, առանց անոր անունն իսկ գրելու, և եկեղեցականութեան հրամայելու յաւանոտ ձեւեր առնելով:

Ասոնք և ասոնց նման դեռ բիւր ապօրինութիւններն ընողները, ինչո՞ւ կ'ընեն Տեղապահի ընտրութեան նախընթացի մը մասին... Որ զմեզուկս քանիք եւ զոչոքս կրանիք...

Պիտի ստիպուինք ուրեմն ըսելու. կամ ա՛յն է որ կիրքը այն սասիճան

կուրցուցած է՝ որ հասարակութեանս կենսական շահերն անգամ կ'անտեսուին ու կ'ոտնակոխուին. կամ ա՛յն է որ անձնական շահերը թոյլ չեն տար հասարակութեանս գլխաւորական շահերն ի նկատի առնուլ. երկու դէպքի մէջն ալ նըւաստութիւն և ահաւոր պատասխանատուութիւն:

Քանզի չէին ուզեր տեսնել հրամայողական պահանջը՝ միանգամ ընդ միշտ վերացնելու հասարակութեանս մէջէն այս ապօրինաւոր և մահացու դրութիւնը. կ'արհամարհէին աղքատին ու կարօտեալին աղաղակը՝ այսպիսի մեծ ճգնաժամերու մէջ. յրնչաց կը քերէին Գերագոյն Հոգեւոր իշխանութեան վերջապէս հպատակելու անհրաժեշտ հարկը. կ'անտեսէին բոլորովին՝ այսքան անկանոն վիճակէն անշուշտ ծնանող մեծ գայթակղութիւնները, չարաչար վարժութիւնը, տղայոց մտաց ու սրտին ապականութիւնը, միով բանիւ՝ հասարակութեանս համար սպառնացող քայքայումը ու պատրաստուող ողբալի ապագան: Սակայն, «Մարդ կ'առաջադրէ Աստուած կը տրամադրէ»:

Մարդոց չարութենէն անգամ Աստուած բարիք կը հանէ. Սոյն այս խնդրոյս մէջ եւս իրաւունքն յաղթական հանդիսացաւ ապօրինաւորութեան և անարդար բռնարարութեանց դէմ. զի «Ժամ եւ իշխանութիւն խաւարի» չի կրնար տեսական ըլլալ:

Վերջին յօդուածով մը պիտի պարզենք խնդրոյն վերջաւորութիւնը:

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՆ ՔՐԻՍՏՈՍ (*)

Օ Ն Ո Ւ Ն Ճ Ը Պ Ա Պ

Յիսուս Քրիստոսըն Ալլահիւրդը գաղուլ
օլունմադըը քագօթիթէ արքըգ կէոյթէ
վէ եւրթէ հիջ պիր ցէյէ պիր մանա
վերիւեմէգ:

Էլվէթ, (հէմ տէ պու պէնիմ իսթիմէյի
քէլամըմ տըր), էյէր Յիսուս Քրիստոս Ալլան
իսէ, հէր շէյ մունթադամ տըր, հէր շէյտէ
պիր անէնկ վէ րապըթա վար տըր, ծուռն
հայաթը, թալիմաթը, միւճիգէլէրի վէ րույի
զէմիստէ իրայէ էյլէտիյի արարը անիպէ վէ
հաթթա տիւնեայը թէշրիյի իթտիյի սաաթ
վէ մահալլ պիլէ եէկտիկէրինէ պիր միւնասթի-
պէթի ֆէվգ էլ ատէ իլէ մէրպուլ տըր: Չէ-
ման թէքմիլ օլուպ տա, տիւնեանըն թըքը-
լիյէթիին իմանընա գաաֆ արիւղ օլտու վէ
հէր քէս խայրը պիլի ֆիմ կիօսթիքիմի ֆիւր,
սիւալընտա պուլընմադա պաշլատը, կիւնա-
հըն սըղլէթի պէշէրիլէթին պալպինի նէթրէթ
իլէ տօլտուրտը իսէ, իշթէ օ վազըթ ճէնա-
պը Հազգ, էզիլմէք իւզըէ պուլընան պէշէ-
րիլէթի խէլաս իթմէք իշուռն էվլատընը ալւն-
եայա կէօնտէրտի: Պու էվլատ լուլթ ու հա-
զիգաթ իլէ մէմու հէր տիւրլիւ զէլալէթ վէ
կիւնաս շայիպէսիստէն միւպէրա, մասուլմ
վէ ազիւղ, հէր կէօնտ ֆազիլէթլէ թէգիլինի
նէֆս էյլէմիշ, Ալլանա գարըը էն պէօյիւք
պիր մէհապպէթ վէ ինսանլարա տօզրու տա
էն ճիտտի պիր րիգգաթ իլէ միւլթէհալի օ-
լարադ էսնայը էվգաթտա վէ մէրքէզի ա-
լէմտէ թէճէլլի իթմիշ վէ էն ուլվի պիր էօ-
լիւմլէ, հայաթլարըն էն նէգիհի օլան էօմ-
րիւնիլ թաիթիմ էյլէմիշ տիր: Սուրէթա ին-
սան կէօրիւնիւր, հալպու քի ծուռն ինսան-
լըղընըն խարիֆ իւլ ատէ կիւզէլլիյի արա-
պընտան, էվվէլէն զայէթ միւլայիմ, սօնրա
շիմէք կիպի րարլայան վէ նիհայէթ կէօզլէր
գամաշտըրան Ալլահլըղընըն նուրը քէշֆ օլը-
նըր: Օնուռն հայաթընըն հէր սաֆհասը, հա-
յաթը իւանիյէյի իզհար իտէր, վէ ծուտա իճ-
թիմա էյլէմիշ օլան ինսանիլէթ, ծուռն ֆիւք-

րինտէ, գալպինտէ, գուվվէթինտէ վէ թէք-
միլ հայաթընտա քէնտինիւքինիւքէսպի ճէ-
սամէթ ու ազամէթ էյլէմէսինէ միւվէֆֆադ
օլուր: Պուռնտան տահա զիյատէ պասիթ, տա-
հա զիյատէ անէնկտար, Ալլանա լայըգ վէ
ինսանա պաիսի շէրէֆ նէ՞ օլապիլիւր:

Պիր տէ ֆարգ իտէլիմ քի Յիսուս Քրիս-
տոս Ալլան տէյիլ տիր, պու տրամըն գահ-
րամանը եա պիր զաֆիլի մասուլմ վէ եախօս
սահիպի մէհարէթ վէ եա ալտատըճը տըր:
Աճէպա պու ֆարգիյաթլա միւշքիլի հիւքմէթ
հալլ օլուռնմուշ մը օլտու: Պիլ աքս, պիրէ
մուգապիլ օն, եիւզ, պին միւշքիլաթ վէ
թարիֆի, հալը, իյզհար զայըր գապիլ հէ-
զարան միւշքիլաթ վէ թէնագուզ գարընըն-
տա պուլուռնըսըն:

Էլվէթ, շայէտ Յիսուս Քրիստոս Ալլան
օլմայուպ տա, սատէճէ պիր ինսան, խաշ-
լանմըշ պիր եէհուտի օլաճագ օլուրսա, ար-
թըգ հիշ պիր սուրէթլէ մանա վէրէմէգսին
քի նասըլ օլմուշ տա օնա ինանմըշլար: միւտ-
տէթի հայաթընտա վէ վէֆաթընտան սօնրա
օնա իման իտիլմիշ, օնըն Ալլան էվլատը, Ալ-
լանըն պիր տանէճիք էվլատը, պիր Պիթիւ-
տէն տօզան, էօլիւլէր արասընտան գըլամ
իտէն, պէշ եիւզ շակիրտլէրի հազըր օլտուը
հալտէ կէօլէրէ սուուտ էյլէլէն պիր Ալլան
էվլատը օլտուընա ինանմըշլար: Պուռնա հիշ
պիր մանա վէլիլէմէգ, Նէ՞ տէմէք օլտուռն,
սէն ինսան օլապըն ինսան էվլատը օլապըն
վէ քէնտի քէնտինէ Ալլան տէյէսին վէ Ալ-
լանլարի հարաքէթ իթմէյէ տէ քէնտինի
մէճպուր գըլապըն: պուռն պիր քէրրէ տիւ-
շիւնտիւլիւն վա՞ր մը: Պիր շարէէք սաաթ
պիլէ պու րօլը օյնայամագսըն: Տահա իւք
նուլթընը պիթիւրմէգտէն էվվէլ հիւվիլէթին
մէյտանա չըգար, քէրագէ օլուրսուռն: Մա
մաֆիյի լէյլ ու նիհար արգասընա տիւշ-
միւշ օլան Յիսուսըն տիւշմէնլէրի, հէր վա-
զըթ ծուռ թէրասուտ իթտիլէրի հալտէ
գաթիէն օնտա միւսթաիտի թէարրուզ պիր
նօղթա քէշֆ իտէմէտիլէր, շօլ, ինսանլը-
ղըն քէնտի քէնտինի լէք գօլայըրլա իզ-
հար էյլէտիյի տէմէրտէն պիրինի պուլամա-
տըլար: Պուռնա մանա վէրիլէմէգ:

(*) Տես թիւ 168. էջ 616:

Եւ, պէօյիւք պիր իման իլէ, գահրամանանէ պիր ֆէտաքեարլըզլաւ օնա ինանըլտըղընա հիչ ազլ էրէմէղ: Եւլընըզ պիր ֆէրաւ տէյիլ, պիւթիւն ալէմ օնա ինանմըչ, հէր շէյի, հաթթա հայաթընը պիլէ օնուն Եօլուննա գուրպան իտէճէք գատար պէօյիւք օլան պիր իման իլէ ինանմըչ ալը:

Շն սէքիզ ասրատան պէրի, Յիսուս Քրիստոսըն Ալլալըզընա օլան իմանլարընըն սալիգասըլա, պէօյիւք պիր զինէթէ կիտէր կիպի սէվէ սէվինէ Եօլուննէ գօշան միլիօնլարճա մարտիրոսլարը. օնուն խաթըր իչին հէր շէյի թէք Ելէմիշ օլան վէ Էօմիլէրի, մահա պիր մաշիլիլէթ, սապր ու ֆէտաքեարի գուրպանը պուլընան էհի զիւհտիւ. տիւն. Եանըն էն առիլ մէսէրէթլէրինէ, հէր տիւրլիւ մահազուգիլէթլէրինէ էլ վէտա իտէրէք օնա արունս օլմազ արզուսըլա քէնտի աֆիֆ հայաթլարընը վէ ֆիթը ու թէսազվուրլարընը օնա թապտիմ Ելէյէն պաքիլէլէրի. օ գատար ազիզ պէվճէլէրի, ֆէտաքեար վալիտէլէրի, մասուլ կէնճ զըզլարը, պա խուսուս կէօղլէրի մէրարէթ Եաշլարը իլէ տօլու օլտուղը հալաէ, քեսալէյի տէրա ու միհնէթի ֆէրաւ վէ թէսլիմքեար պիր գալպ իլէ գապուլ Ելէմիշ օլան հաստուղ հիսապուլ միւմիլիլէրի. օնուն մէհապպէթի իչին հալաթլարընը թէպալի իտէրէք թէվպէ ու իսթիզֆարըն թա շէվահիգի ալիլէսինէ վէ միւշքիլէսինէ գատար իրթիֆա իթմիշ պուլընան գահրամանլարը սայա պիլիլ իտէն սայ պիր քէրէ:

Յիսուս Քրիստոսըն Ալլան օլմատըղը թագաւորաւ, հալի նա միւմքին պիր մուամմա հիւքմինէ կիտէն, Եալընըզ հէր քէսին օնա ինանմասը, ֆէտայը նէֆա իտէճէք գատար գալի պիր իմանլա ինանմասը տէյիլ տիր, Եա, պու իման իլէ, պու իման տայիլընանտ թէնտիտի հայաթ վէ իսլահի նէֆա իտիլմէսի տիր, Էվլէթ, սէնին, պիր Եալանճըլըզ, պիր բիւյա վէ Եախօտ պիր խիւլիա թէսմիլէ իթտիլին, Յիսուս Քրիստոսըն իմանը, պիւթթէրէսթիլի տէվիրէպիլմիշ, հաստէլէր մէղհէպիլին խարապ վէ Եաքի ալէմին միւթէաֆֆին հէվասընը թաթիլ իտէ:

պիլմիշ տիր, էն պէօյիւք սէճիլէլէրէ, էն ուլլի ֆազիլէթլէրէ վիւճուս վէրմիշ, Ս. Անէն, Ս. Չէյիլիա, Ս. Օգոստինոս, Ս. Թովմաս, Շարլմանէր վէ Ս. Լուիէր հուսուլա կէթիրմիշ տիր: Քրիսթիյան Էվրօբայը թէվլիա վէ ազիզ Քրիստայը իհասա Ելէմիշ տիր, Օն սէքիզ ասրալար կէշմիշ օլտուղը հալաէ օ տահա սյու կիւն պիլէ հէվայի նէֆասանիլէյի թէսքին, ասարը գահրամանանէյի իլհամ իթտիլի կիպի, կէօզ Եաշլարընը գուրուտուր, իլթիյամ նա քէզլըր խասթէլիքլէրէ շիֆա վէրիլ, էն Ելիմ Եօլունէրին պիլէ լէնկիլինի տէյիլիլ, իշթէ անլամասը գապիլ օլմայան պուլընար ալը, հէմ տէ պուլընարը Եալընըզ Յիսուս Քրիստոսըն Եալմասը ալը: Պիր վազըթ պէօյիւք խաթիպլէրաէն պիրի աշլար շէքէրէք տէր իտի քի «Հագիգաթ հոպընտա, հոպիգաթա լայըզ օլան պիր թառազվուր ոտիլիլ օլապիլմէք իչուն խաշըն սայաղընտա գանուղէտէ օլմալը վէ, կէօրտիւլիւմ շու խաշ պիր բիւյա, պիր տօլանս ալընճըլըք օլտուղը հալաէ, գուրութաղը կէօզ Եաշլարընա, թէսէլի իթտիլի քէտէրէրէ, թատիլ ու թախֆիֆ Ելէտիլի ֆէլաքէթլէրէ, Եսէրի իլհամը օլան ֆազիլէթլէրէ, հուսուլա կէթիրտիլի ֆէտաքեարլըզլարա պադաճապ օլուրսամ, Եա րապիլ, էյէր Եանլըշըզ պու գատար շէյ Եաբապիլիյօրսա, Եա հոպիգաթ իճրայի հիւքմ իտէճէք օլուրսա, օ նէլէր Եաբաճապ ալը» տէմէլիլիմ, աիլէ նիսա իտէրաի:

(Մապասի վար)

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԴՆԻՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԹԷՆ

Գրք. Ա. — Գլ. ԻԳ. — Մանուկ մօծողքեան վրայ (Շար.)

Պահէ՛ զիւզ երկրի վրայ իրաւ պանդուխտ եւ հիւր, որուն քնաւ հոգը լին աշխարհի գործերը:

Պահէ՛ պիտոյ ազատ եւ առ Աստուած ի վեր ուղղիւ, խնայ, խնայ ջուհիս հոս ֆաղախ մնայուն:

Հո'ն ուղղի հաւաքագործայ աղօրհներ և և հեռու-
քիւններ՝ առաւելո՛ք հանդերձ, որպէսզի հոգիդ աւօթա-
նի ըլլայ յիս մահու երջանկաբար դառնայ առ Յիւ,
Ամեն:

ՍՈՒՐԲ ԲԵՌՆԱՐԻՈՍ. ՎԱՐԻԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ամէն երեւելի հեղինակներ, որ առիթ ունեցեր
են Ս. Բեռնարդոսի վրայ խօսելու, հիացեր են ան-
նելով անոր վրայ միացած Եկեղեցւոյ բոլոր Հայրե-
րուն և Վարդապետներուն հազին և վսեմ ձիրքերը,
և զինքը կոչեր են Տիեզերքի Պատգամը, Արեւմտաբի
Սքանչելագործը, շնորհաց օրէնքին եղիան:

Հայրը Տեկէլինոս, աէր Ֆոնդէնի, շատ նշանաւոր
էր ազնուատոհմութեամբ և բարեպաշտութեամբ,
Ալէթ, իր երանուհի մայրը, որ Մոնդարդ գերդա-
տանէն էր, քրիստոնէական կրթութեան ամենախիստ
հրահանգներով անցուց իր կեանքը: Երանուհին երբ
սուրբը աշխարհք բերուաւ, չշատացաւ դայի Աստու-
ծոյ նուիրելով, ինչպէս ըրած էր իր միւս զաւակները.
այլ Սամուէլի մօր Աննայի բարեպաշտութեան ու ե-
ւանգիին հետեւելով, զանիկայ նուիրեց Եկեղեցւոյ
ծառայութեան:

Երբ Բեռնարդոս կարգաւոր գրեցու տարիքին հո-
սաւ մայրը զանիկայ յանձնեց Շաթիխոն եկեղեցւոյն
քահանաներուն Բեռնարդոս հիանալի կերպով օգ-
տուեցաւ այն տեղ առած դասերէն: Իր մատաղ հա-
սակին մէջ երկինքէն մեծ շնորհք մը ընդունեցաւ:
Մոնդիան գիշերը՝ երբ ուրիշներուն հետ կը սպասէր
աստուածային պաշտամունքին սկսելուն, վրան թե-
թեւ թմբութիւն մը եկաւ, որ միջոցին աստուածա-
յին մանուկը, Յիսուս, անոր երեւցաւ անմահ գե-
ղեցկութեամբ մը և նորածին վիճակի մէջ: Այնու-
հետեւ միշտ յատուկ ջիւղեռանդութիւն մը ունե-
ցաւ այս Սուրբ Խորհուրդին: Մանուկ հասակէն միշտ
արտաքոյ կարգի գութ ու գորով մը ունէր աղքատ-
ներու նկատմամբ. և ծնողքէն ինչ ստակ որ առնէր
աղքատներուն կու տար:

Հազիւ տասնեւհինգ տարուան էր երբ իր երա-
նուհի մայրը կորսնցուց: Մտքի և մարմնի ամէն ձեռ-
քերով ճոխացած ըլլալով կրցաւ իր հասակին վտանգ-
ներէն ճաղապրել: Սակայն օր մը խոհեմութեան մէջ
թերացաւ. որովհետեւ զարգարուած դեռատի աղ-
ջելան մը հանդիպելով քիչ մը կանգ առաւ և հետա-
քըքրութեամբ զանիկայ դիտեց: Ստոյգ է որ այս
բանս ըրաւ առանց չար մտքի և նշի իսկ առանց
անդադարձութեան: Բայց ինքն իրեն գալով և իր
թեթեւութիւնը տեսնելով, այնքան ամօթ և ցաւ
զգաց որ այն վայրկեանին իսկ՝ ինքզինքը նետեց կի-
սովին սառած աւաղանի մը մէջ. և այնքան երկար
ատեն մնաց հոն, որ իր բնական ջերմութիւնը գրեթէ
իսպաւ չիջաւ. ասով արժանի եղաւ Աստուծոյ բա-
րութենէն ընդունելու ողջախոհութեան այնքան գե-

րագահց պարգեւ մը, որ այնուհետեւ այլ եւս չզգաց
ցանկութեան վատթար ազդեցութիւնները:

Սակայն և այնպէս, իր առաքինութիւնը աւելի
ապահով վիճակի մէջ դնելու համար, շնորհաց մղու-
ներուն տեղի տալով, որոշեց քաշուիլ Սիդոյի վանքը,
ուր իրեն ետեւէն դացին իր հօրեղբայրը և իր եղ-
բայրները, բաց ի կրտսերէն որ դեռ եւս կրօնաւորու-
թեան հասակը չունէր: Յետոյ փութացին իրեն հե-
տեւիլ իր միւս ազգականները, բարեկամները և քե-
թէ բոլոր ծանօթները. Աստուծոյ սիրտն հրգեհն պո-
քան յաջողութեամբ թերեւս երբեք չէր ծաւալած:
Երանուհին Ալէթ մեծ մաս ունի այս բանիս մէջ, իր
զաւակներուն կ'երեւէր. և իր սրբելի պատկերը զա-
նոնք կը հրաւիրէր աշխարհէ հեռանալու դէպ ի
վանք, որ երկինք երթալու ապահովագոյն ճամբան է:

Սակայն այս դարձերուն մեծագոյն մասը տեղի
ունեցան շնորհիւ մեր Սուրբին: Անիկայ այնքան զօ-
րաւոր էր խօսքով որ երբ հրապարակաւ կամ առանձ-
նակի յորդորներ կ'ուղղէր ժողովրդեան, կ'ինքը իրենց
պրերը կը բռնէին, մայրերը իրենց զաւակները կ'ար-
գելափակէին, բարեկամները իրենց բարեկամները կը
զրաղեցնէին վախճալով որ ըլլայ թէ երթան անոր
խօսքերը լսեն և կրօնաւոր ըլլալու համոզուին: Ասով
մէկտեղ երեսուն հոգիէ աւելի շահեցաւ որոնց մէջն
է Հիււկ ար Մագոն շատ առաքինի և ընչաւէտ աղ-
նաւականը, որ յետոյ Բոնդինիի հիմնադրի է առա-
ջին արքայ և Օքսէրի եպիսկոպոս եղաւ:

Պէտէթի մէջ վանք մը տրամադրուեցաւ ամուս-
նացեալներուն կ'ինքերուն համար: Ամէնքը միասին մեկ-
նեցան Ղլէրվոյ երթալու և հոն ուխտերին կատա-
րելու համար: Այն ատեն Ֆոնդէնի մէջ էին, որ Տե-
կէլինոսի և անոր երեք որդւոյն կ'ուլի տունն էր:
Վերջինս ելելու ատեն տեսնելով իր կրտսեր եղբայ-
րը, Նիվարը, որ իր ընկերներուն հետ կը զբօսնուր
լսաւ. Մնա'ս բարով, Նիվար, քեզ' քեզ կը բողոքեմ
մեր բոլոր ունեցածներուն:— Ի՞նչ պատասխանեց մա-
նուկը ծերի իմաստութեամբ, դուք երկինք կ'առնուք
եւ ինձի երկիրը միայն կը բողոք. յիշա՛ւ բաժանում-
նիկ ուղիղ չէ: Ասոր վրայ անոնք ճամբանին շարու-
նակեցին դացին: Նիվար նոյն ատեն տունը հօրը քով
կեցաւ: Բայց շատ չանցած ինքն ալ իր եղբայրներուն
հետեւեցաւ. այնպէս որ հայրը Տեկէլինոս տանը մէջ
մինակ մնաց իր Հոմաբէլինա աղջկան հետ, որուն
դարձն ալ քիչ վերջը պիտի տեսնենք:

(Շարունակելի)

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՑ ԴԵՄ

(1827 — 1830)

Բազար կիւն 18.— Շէֆքէթլու Սուլթան Մահմուտ էֆէնտիմիզ թէրսանէտէ եէնի կէմի էնտիրտիքտէ պիր հալ օլտու կէմի չօգ քօլայլըզլա էնտի աէնիզէ . հիւնքեարուն քսոյթ հօշունա կէլտիինտէ . սօրար փապունճնու Ահմէտ քարտան բաշայա . նէտէն պու կէմի պէօյլէ քօլայլըզլա էնտի պունու սօրսուքտան մատա տէյօր . կէօրիւյօրում բայալարուն ճանտան չալըշտըլարուն տա թաճիպ իտէյօրում հիւնքեարուն պու իքի սօրուշունտան . փաշա կէօգ իտէյօր հէմալ պաշը Բրքընիքի Մըքայէլէ քի էֆէնտիմիզին աշաքլարուն քարանսուն . հիւնքեար տա տիքաթ իտէր փաշանուն կէօգ իտտիինի . Սօրար բաշայա . նէ իտի սէնին կէօգ իթտիդին . Օլտէմ փաշա հիւնքեար աշաղընա տիւշիւպ նիեազ իտէր . էֆէնտիմ պու քուլլարուն քաթօլիք թայիֆէսինտէն օլուպ հալա Հասքէօյտէ սիրկիւնիւքտէ պուլունույօրլար . օնտան հէր կիւն թէրսանէյէ կէլմէլէրինի եօլուզազ տիւշէյօր վէ վաքտինտէ իշ պաշընտա հազըր պուլունամայօրլար . պունլարուն Պէյօղլունտա էի քէօթիւ չարըք չիւրիք էվլէրի վար ըտը էրմէնիլէր օնլարը սաթըյա չըքարմըլար . իշթէ , էֆէնտիմ , պու տուր տէրտլէրի քի հուզուրունուզտա տիլէկ իտէրլէր . անճա քէրէմինիզէ միւհիթաճ տըրլար . Հիւնքեար պու սէօղլէրի տիյնէտիքտէ փաշատան , քայէթ խօշունա կէլիր . հաթտա քէյֆի տէ եէրինտէ աֆ իտէր օնլարուն սուշլարըն . վէ նոթք իտէր , հէր քիմ թէրսանէ ամէլէսի իտէ , տէօնսին Պէյօղլունա էվլինէ կէօգ էթսին վէ պունլարուն էվլէրի սաթըլմասըն իշթէ • կիւն հազ թարաֆընտան պու ֆաքիւրլէրէ եէնի միւճիզէ տօղտու :

Բազար Խրքիսի 19.— Շէֆքէթլու էֆէնտիմիզին նութքու հիւնաշիւնիւ օլտուքտա Ահմէտ քարտան բաշա մէրամընճա քէնտի արզունու իճրա էթտի , էմր իտէրէք օլ Բըրքնիքի թայէֆէսինէ , քիմլէր քի Հասքէօյտէ սաքին օլմուշլարսա , լաֆօը թէրսանէտէ իշլէյէնլէրին ճէմի վարսուն Պէյօղլունա . օնլար տա սէվինէրէք աշաքլանտըլար կէօղլէրինի պաղլայըպ 12 արապայա եիւքլէտիպ վարտըլար Պէյօղլունա էվլէրինէ տալիլ օլտուլար հիքմէթ ազամէթ կէօստիւրէրէք . շէօյլէ քի Հասքէօյ իշի տօնա քալտը վէ տիլլէրի թութուլտու :

Բազար Խրքիսի 26.— Պալատէ գիքր օլան Միսկէի Մկրտիչէ պիր ժամկոչ վարսը տիւքեանընա ճէպրէն քալտըրըր օնու կէօթիւրիւր փաթրիքհանայա . կիճէ հուզուրա չըքտը իտէ փաթրիք սօրար պունա քիմին էմրի իլէ կէօգ էտիպ էվլինէ թաշընտըն . Միսկէի քաթի ճէվապ իտէր Սուլթան էմրի իլէ . օլտէմ փաթրիք խըրսա չըքըպ տէյօր չիմտի պէն սէնի մաղաշայա էնտիրէյիմ տէ , քօ Սուլթան տէտիյին կէլսին սէնի պունտան ալսըն . պու սէօգ իւզէրինէ էմր էթտի հափս իթմէյէ օնու :

Բազար, Քեանունի կվիկ 2 . Թիւֆէնկէի պաշը ազամէթի իլէ վարըյօր Պէյօղլունա ինկիլիզ սարայընտան աշաղա Մէրգիս օտալարընա . վէ էվ գարուլարընը չալըպ ըսմարլայօր մութլապա իւշ կիւնէ գըտար էվլէրտէն չըգասընըզ . հանկը քաթօլիկ քաշկըն օլուպ էվլէրտէ սըղընմըզ ըսա տուրմասըն . գիրա կէրիտէ քալան սաթըլմատըք էվ վար ըսա օնլարտա մէզաթ օլաճապ , անճա էմրի փատիշահըն ֆէրմանը տըր . սիզ նէ ճիհէթ իլէ կէլիպ պուրայա սէրպէսթ օթուրուեօրսսւնուզ :

Բազար Խրքիսի 3 . Մահալլէ քէհեասը աքտար եէգիտ Ակոք թէպալիլ օլուպ պաքկալ քըլըզընա կիրէր պիր տէ Վօյվօտա թարաֆընտան մանսուրէ պիլէսինճէ տօլրու վարըր Ձէլթտըրունտանըն քափուսունա վէ սէսլէնիր Մարիամա աշաղայա էնսին տէի . Օ տա անքարիպ էնէր աշաղա քափուլայ վարըր նէ վար տէի . Ակոք պունու կէօրտիւքտէ քօ :

լուստան քաղաքը, վէ ճէպրէն ալտը տը-
շարը քի կէօթիւրտիւն, քըզ պու հալէ կիր-
տիքտէ աղնար պաշընա կէլէճէինի վէ սալը
թապիւթընտա աճուզէլիք օլտուլուռնոսն
պաշլար հայքըրմաղա նէ քըտար սէսի վտը
ըսա: Ճիվար քոմշուլարը միւսլիման քարը-
լարը պու մախլաթայը իշխատիքտէ, քոշան
քոշանա օլուրլար տալաճը օլուպ եանի ա-
տէթ տէիլ էօյլէ բէզալէթ իլէ քարը քիշի
կէօթիւրմէք, ալէլ խուսուս սուլթան իշճի-
սինի. լաքին էրմէնիլէրին մէրամը անճա
հէր շէյի բէզիլլիէ թէպտիլ իթմէք. տահի
էլտէ թուլթամաղը պիլէ օլմազսա չապալա-
սըլար պուշլարա պէլնամիք իթմէյէ չիւն
սուլթան թօրուզու իլէ իշ կէօրմիւշլէրտի.
սանքի բաթրիին սաքալընա կիւլմէ հիսապը.
պու ճիւմլէ էստի էթմէտի Ակուր սիւրաիւ
կէօթիւրտիւ Մարիամը, լաքին պիր պաճաք-
սըզ էօրտէք եարուլու քըզ թէքմէ քօտու
պիւթիւն միլլէթէ քարը. վէ կէրէի կիպի
իւստէ չըզար. չիւն փաթրիք պուշու տէք
իլէ սիւրկիւնէ կէօտէրէճէք իտի իւսկիւ-
տարա կէչիւրմիշ իքէն, սուլթան էմրի իլէ
կէրի տէօտիւ քուրթուլաու. վէ պէօյլէճէ
էրմէնի միլլէթի փաթրիի իլէ քէփազէ օլ-
տուլար էնճամ պիր սաքաթ քըզսան օ քի
ու.մուլմազ ֆիքիւրէ կէլմէզ շէյ իքէն:

(Շարուհալիլի)

ԻՄԱՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՄԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (°)

«Բարի հայր, բարի ամուսին բարի տէր,
առանց սկարուքեան»:

«Պատեցէ՛ք ձեր ծնողքի, մանաւանդ ի-
րենց ծերութեան ժամանակ»:

Բարի հայր, բարի ամուսին, բարի տէր,
առանց սկարուքեան»

Բարի հայր

է.

Մեզմէ առաջ յաճախ զրուցուած է, բայց
պարտաւոր ենք հոս դարձեալ նոյնը կրկնել.

(°) Տե՛ս Թիւ 160, էջ 519.

հայր մը կը պարտի իւր զաւակներուն անուն-
ըը, գաստիարակութիւնը և օրինակը. կը
պարտի անոնց դարձեալ, երբ ժամանակը գայ,
անոնց սեղաւորումը: Եթէ անոնց ինչքը
մոխէ, քողութիւն կ'ընէ. եթէ զանոնք
գոյթակղեցնէ, որդեսպանութիւն է. եթէ
անոնց դաստիարակութիւնը զանց ընէ, ան-
միտ ընթացք մի է, որ իրեն և իւր ընտան-
եաց զգալիսութեան պատճառ պիտի ըլլայ:
Համոզուած ըլլալով որ, կենաց վիճակի մը
ընտրութիւնն հայրական պարտաւորութեանց
զլխաւորներէն մին է, վասն զի այս ըն-
տրութիւնն կը վճռէ յաճախ յոյր կենաց
երջանկութիւնը կամ ապերջանկութիւնը,
բարի հայր մը, կ'ըսեմ, բան մը զանց պիտի
չընէ, որպէս զի իւր զաւակներն այնպիսի
ընտրութիւն մը ընեն, որուն վրայ ապա-
գային երբեք չզղջան: Եւ որպէս զի ինքն
ալ զղջալու պատճառ չունենայ, այնպիսի
ծանրակշիռ խնդրոյ մը մէջ մի միայն իւր
վրայ չպիտի վստահի. և, չսխալելու հա-
մար, իմաստուն, լուսաւորեալ և առաքինի
մարդկանց խորհուրդ պիտի հարցնէ: Անոնց
լոյսերէն օժանդակուած, և իւր զաւակաց
ընտան արամադրութիւնները և միտումնե-
րը ուսումնասիրելէն յետոյ, անոնց պիտի
առաջնորդէ, անոնց խորհուրդ պիտի տայ,
բայց չպիտի բռնադատէ, և երբեք անոնց
յարգալից հեզութիւնը չպիտի զոհէ ազա-
հութեան, ամբարտաւանութեան, կոյր նա-
խապշարման մը, ինչպէս շատ մը չար հայ-
րեր կ'ընեն: Փոխանակ իրենց զաւակաց ճա-
շակը և կոչումը նկատողութեան առնելու,
իրենց անձնական կարծեաց միայն, իրենց
միտումներուն, կամ պատշաճութեանց և
ընտանեկան յարմարութեանց խորհուրդ կը
հարցնեն: Եթէ դուն կրօնք, և քու զաւա-
կացդ վրայ գորով ունիս, այսպէս իրենց
զգալիսութեան պատճառ ըլլալէ պիտի
զգուշանաս, թէ՛ զիրենք ստիպելով աչ-
խարհի մէջ այնպիսի վիճակով մը կապուե-
լու, որմէ իրենց սիրտը կը խորշի, և թէ
զանոնք բռնադատելով Աստուծոյ զօհողու-
թիւն մը ընելու, որուն իրենց սիրտը չհաւա-
նիր, և այս կ'ընես, քեզի աւելի սիրելի ե-

դող մինս զաւակացդ առաւելագոյն օգտին համար, Դուն պէտք չէ որ այն անգութ հայրերուն նմանիս, որոնք, իրենց զաւակներէն մին, իւր նախահարց գիրքէն աւելի վեր բարձրացնելու և զանիկայ իրենց ունայնասիրութեան կողք մը ընելու համար, ամենեւին հոգ չեն ընել իրենց լողոր միւս զաւակները անոր գոհելու: Չեն գիտեր արդեօք թէ, «Եթէ ոչ Տէր չինէ զտուն, ի նանիր վաստակին չինողքն նորա»:

Կ'ուզեմ երկնից օրհնութիւնները քու ընտանեացդ վրայ հրաւիրել, և մարդկանց համարման արժանանալ, քու բոլոր զաւակացդ համար հաւասար սէր մը ունեցի՛ր: Եթէ թոյլ տուեալ է երբեմն աւելի գորով ցուցնել անոր, որ ամենէն փոքր, սկար, քաղցրահամոյր և փաղաքիչ է, երբեք ներեալ չէ բոլոր իւր ունեցածը տալ միոյն, ի վնաս այլոց, երբ բացարձակապէս անոնք անարժան եղած չըլլան: Դուն չա՛տ աւելի կ'օժանդակես անոր, զոր կը սիրես, իւր եղբայրներուն կամ քորերուն սէրը անոր յանկուցանելով, քան թէ անոր աւելի ինչքեր տալով: Բարի հայր մը պէտք չէ՞ որ իւր ամէն զաւակաց նկատմամբ հաւասարապէս բարի ըլլայ: — Բարի հայր մը եղի՛ր, բայց ոչ չափազանց բարի, և մանաւանդ երբեք քու զաւակացդ կրքերուն և անարժան ընթացքին հանդէպ սկար և թոյլ չգտնուիս, որ քու և անոնց վրայ Երկնից պատուհասները կը հրաւիրէ, ինչպէս որ Հեղի Քահանայապետին և իւր երկու զաւակաց վրայ հրաւիրեց: Այնչափ ատեն որ անոնք հայրական իշխանութեան ներքեւ կը գտնուին, և զոր Աստուած քեզի տուած է, ամբողջովին ի գործ դիր զայն, անոնց անկարգութեանց առաջքը առնելու կամ զանոնք արգիլելու համար, և եթէ խօսքերն օգուտ չընեն, ուրիշ աւելի խիստ և ազդու միջոցներ գործածէ:

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱՃԵՄԵԱՆ
(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԼԻԻԻՒԻ ՎԱՐԴԱՐԱՆԸ: — Կլիւք որ սոսա նութերորդ դարուն ամենէն հռչակաւոր երաժիշտն եղաւ, իր արուեստին առաջին տարրերը Վիեննայի Մայր Եկեղեցւոյն կամարներուն տակ սորվեցաւ:

Կլիւք, կ'ըսէ անոր կենսագիրը, տխեղժ, դաշկաղէմ, սկարակաղմ մանուկ մըն էր: Իր աղքատ ծնողքը օր մը զինքը Վիեննայի Մայր Եկեղեցւոյն վարչութեան տարին և խնդրեցին որ դպրոցներու դասին մէջ ընդունուի, և Աստուծոյ օրհնութիւնները երգէ: Անոր ձայնը այնքան անուշ, այնքան վճիռ և յուզիչ էր որ երբ կ'երգէր, եկեղեցին կը լեցուէր հոծ բազմութեամբ մը, որ անոր կ'ունկնդրէր արտակարգ հիացումով...

Իրիկունը, երբ արեւը ապակիներուն զմուխտները եկեղեցւոյն մէջ կը ցանցնէր, մանուկը սապանակին առջեւ ծնրադրած կ'աղօթէր և կը մտածէր: Օր մը, որ սովորականէն աւելի աղէկ կերպով Աստուածածնի տաղ մը երգած էր, կրօնաւոր մը համակ յուզուած անոր մօտեցաւ և զանիկայ ողջագուրեց, ու

— Որդեա՛կ իմ, ըսաւ անոր, այսօր կեանքիս ամենէն հեշտալի արցունքները թափել տուիր ինծի: Հիացումիս իրեւ գրաւական քեզի տալիք բան չունի՛մ: Բայց ա՛ռ սա Վարդարանը, պահէ զայդ ի յիշատակ Եղբայր Անսեմուսին: Զուրցէ՛ զայն ամէն օր, գոնէ մասամբ: և եթէ ըսածս հաւատարմութեամբ կատարես մեծ մարդ մը պիտի ըլլաս:

Կլիւք հաւատարմութեամբ ի գործ դրաւ կրօնաւորին խրատը:

Ծնողքը շատ աղքատ ըլլալով չէին կրնար թոյլ տալ որ անիկայ շարունակէ իր ուսմունքը: Օր մը յանկարծ տանը դուռը դարձնեցաւ: Երաժշտապետ մըն էր, որ, Կլիւքի ուսմունքը լրացնելու խոստումով, զանիկայ առաւ հետը տարաւ Իտալիա, ուր կ'երթար Բալետդրինա երաժիշտին երկերը հաւաքելու պաշտօնով: Կլիւք այնուհետեւ արագաքայլ յառաջացաւ արուեստին ասպարէզին մէջ:

Վիեննայի պալատին մէջ, զուարճութիւններու միջոցին, իրիկունը, մեծանուն երաժիշտը կը հեռանար, կ'առանձնանար իր Վարդարանը զուրցելու համար: Եւ երբ փառաւոր կեանքէ մը վերջը մահը յանկարծ կուգաւ, այսպէս ըսենք, զանիկայ շանթանաւորելու. ան կազմ և պատրաստ էր. Եղբայր Անսելմոսին Վարդարանը ձեռքն էր տակաւին:

ՄԱՅՐԱՊԵՏԻ ՄԸ ՎԱՅՄ ԽՕՍԻԸ. — Ամբողջ մը հրամանատարը կը խնդրէր Գթութեան Բոյրէ մը որ երթայ զինուորներուն հետ ամբողջին մէջ արգելափակուած մնայ. որպէս զի հարկ եղած պարագային զանոնք խնամէ:

Մայրապետը իսկոյն գնաց իր Մեծաւոր Մօրմէն հրաման առնելու. «Բայց, ըսաւ Մեծաւորունին, եթէ հրամանատարը ամբողջօրը հանէ թշնամիին ձեռքը չիյնալու համար:

— «Միասին օգը կ'ելլենք, պատասխանեց Մայրապետը, և Աստուած զմեզ կ'ընդունէ՝ քանի որ իրեն և Ֆրանսայի համար է որ կ'աշխատինք»:

ԼՈՆՏՈՆԻ, Ուէսթմինսթրի Մայր Եկեղեցւոյն մէջ, վերջերս կաթողիկէ փառաւոր ցոյց մը տեղի ունեցաւ, նախաձեռնութեամբ եռանդուն Հայր Ֆրէշլըրի: Եթէ Յաւերու սօնին օրը Փրկանքի-Տիրամօր ընկերութեան բոլոր անդամակիցները հրաւիրած էր մասնակցելու աղօթքի և ապաշխարութեան թափորի մը, որ տեղի պիտի ունենար նոյն ջեցեսալներու հոգւոյն հանգստեան և աշխարհի խաղաղութեան համար: Յայտապիրը թէ՛ անգղիերէն և թէ՛ ֆրանսերէն գրուած էր: Թափորը յառաջացաւ սքանչելի կարկաչահոլութեամբ. երկու կողմէն կ'ընթանային հսկող ոստիկաններ: Այլեւայլ ազգերու ներկայացուցիչներ իրենց յատուկ դրօշներով խումբ խումբ շարուած էին: Պեղծերուն զբօշը սքողուած էր: Պեղծերէն յետոյ կուգային Ֆրանսացիներ, Ռուսեր և նոյն իսկ Հոլանտացիներ: Առջեւէն կը քալէր փախըստական Պեղծ տղայ մը, որուն մէկ թեւը

կտրուած էր: Թափորը Լոնտոնի փողոցներէն անցաւ Վարդարան զուրցելով և երգեր երգելով: Ճամբան նուագաժողներու խումբ մը թափորին հանդիպելով նուագեց Աստուած օրհնէ՛ Պապը երգին եղանակը: Թափորը որ ժամը Յին ճամբայ ելած էր, հազիւ ժամը Յին Մայր Եկեղեցին հասաւ: Թափորի սփնտղէն ինչպէս նաև թափորին անցած ճամբուն մայթերն և տուններուն բոլոր պատուհանները հոծ հանդիսատեսներով լի էին: Եկեղեցին ասեղ ձգելու տեղ չկար, ստուար բազմութիւն մը ստիպուեցաւ դուրսը մնալ: Երբ եկեղեցականները աւանդապաշտուն կը մտնէին, Ֆրանսացիները յուզիչ ձայնով մը հնչեցուցին Գրուիէն, Աստուած իմ, երգը. որուն երեք տունները և յանկերգը առաջուց տալով և թափորին մասնակցողներուն բաժնած էին: Անդրիայիք ձայնակցեցան Ֆրանսացիներուն և անոնց հետ կրկնեցին սա բառերը. Փրկէ՛, փրկէ՛ Յրաւան, որոնք խոր, յուզումնալից տպաւորութիւն մը գործեցին բոլոր ունկնդիրներուն վրայ: Շատերը չէին կրնար իրենց արցունքը բռնել: Օրհնութեամբ վերջացաւ այս հանդէսը, որուն նմանը չէր տեսնուած Լոնտոնի Ս. Հաղորդութեան Միջազգային Համաժողովին անմոտանալի թափորէն ի վեր:

ՁԷՔԷԼԻՆՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԷՋ. — Անգլիոյ զինուորական իշխանութիւնը Պեղծիոյ ամենէն կարող օգնաւորը Լոնտոն հրաւիրելով քննութիւն կատարել տուած էր թէ պերման դեկաւոր օգնապարկները կրնան ռմբակոծել Անգլիոյ մայրաքաղաքը: Տեղի ունեցած քննութեան մասին տեղեկապիր մը պատրաստուած էր: Պեղծ օգնաւորը յայտարարեց թէ շատ քիչ յոյս կայ թող շտաբու համար որ Ձէքէլիները պօսպա նետեն Լոնտոնի վրայ: Անվէրսի վրայ գիշեր ատեն Ձէքէլին մը տեսնուեցաւ, որուն նետած պօսպաներն ահարկու ձայներով պայթած էին: Պօսպաներուն քանդած տեղերը քննուելով տեսնուած էր թէ անոնց պարունակած պայթուցիկները շատ զօրաւոր էին: Մասնազէտ Պեղծ օգնաւորին իր տեղեկագրին մէջ կ'ըսէ թէ անօգուտ է հալածել Ձէքէլին:

ները, վասն զի օղապարիկն երբ տեսնէ որ լուսարձակներու միջոցաւ երեւան ելած է, իսկոյն 1600 մեղր բարձրութեան մէջ ելլելով անտեսանելի կ'ըլլայ. ատկէ դուռ, հարկ կ'ըլլայ նաև դադրեցնել օղապարիկին դէմ կատարուող ումակոծութիւնը, որովհետեւ ղեկաւոր օղապարիկներուն դէմ արձակուած ռումբերուն ամէնքն ալ քաղաքին վրայ իջնալով մարդու մեծ կորուստ կը պատճառեն և օղապարիկին նետած պոմպաներէն աւելի վնաս կը հասցնեն: Հետեւաբար, լուսարձակներու և բազմաթիւ փոքր թնդանօթներու հակառակ, Ձէրէլիններուն դէմ արձակուած ռումբերն արդիւնք մը չեն ունենար:

Պելժ օդանաւորդը կը յարէ թէ օդանաւերու միջոցաւ օղապարիկներուն հալածումն ալ անօգուտ է. նաև կը յիշեցնէ թէ օդանաւին համար մեծ ժամանակի պէտք կայ և միանգամայն շատ դժուար է Ձէրէլինէ մը աւելի բարձրանալ և անոր ումակոծութենէն զերծ մնալ: Միանգամայն օդանաւով գիշերային ճամբորդութիւնն ալ խիստ դժուար է: Պէտք չէ նաև մոռնալ թէ մէկ կողմէ ալ քաղաքէն ուղղուած լուսարձակին ճառագայթներն օդանաւորդին աչքերը կը խռովեցնեն, որով դժուար կ'ըլլայ որոշել ղեկաւոր օղապարիկին գտնուած տեղը: Ինչպէս պատահեցաւ Սնվէրսի մէջ, երբ օդանաւը կը հալածէ Ձէրէլինը, ինքն ալ կ'ենթարկուի անոր դէմ արձակուած թնդանօթի ու հրացանի կրակին: Ղեկաւոր օղապարիկներէն ամէն մէկուն մէջ կան երեսուն հոգի և չորս զօրաւոր խորտընկէց՝ օղապարիկին հակառակ ու սողելի նաւակներուն մէջ ու վրան:

Սնվամ մը որ այդ խորտընկէցները բուռն կրակի մը սկսին օդանաւն այլ եւս չի կրնար մօտենալ անոր: Պելժիոյ օդանաւորդներն եթէ այդ տեսակ ձեռնարկ մը ընէին, անպէտ հերոսութիւն մը ցոյց տուած պիտի ըլլային: Պելժ օդանաւորդը սապէս կ'եզրաւարտէ իր տեղեկագիրը. — «Վերջապէս պաշտպանութեան ապահով միջոց մը չկայ Ձէրէլիններուն դէմ, որ ահարկու գէնքեր են: Օղապարիկները դիւրաւ կը տարուին ուղղուած

կողմերը, նաև 750-800 քիլոմէտրի հեռաւորութիւն մը քիչ աստիճան ու դիւրաւ կը կտրեն: Կարելի է որ Ձէրէլին մը յարձակի Լոնտոնի վրայ, Սնվէրսի մէջ ամէն ոք զիտէ թէ Գերմանները նոյն նպատակով բազմաթիւ օղապարիկներ փոխադրած են Պելժիս»:

ՌՈՒՍ ՄՕՐ ՆԱՄԱԿԸ. — Լեհաստանի կըռիւններուն մէջ սպաննուած ռուս սպայի մը կողմէն վրայ գտնուած է իր մօր կողմէ գրուած հետեւեալ նամակը զոր հրատարակեցին Բեդերսպուրկի թերթերը. —

«Քու հայրդ մեզմէ շատ հեռու տեղ մը սպաննուած էր, Լաօկան, և ես քեզ զրկեցի որ մեր սիրելի երկիրը պաշտպանես սատանորդի թշնամին դէմ: Բնաւ մի՛ մոռնար զիւցազնի մը որդին ըլլալդ: Միտա կտոր կ'ըլլայ, և լալով կ'ըսեմ քեզի որ հօրդ արժանի գաւակ ըլլաս: Գիտեմ թէ ի՞նչ սուկալի բան է ըսածս, թէ դուն և ես ինչէ՛ր ունինք քաջելիք, բայց դարձեալ նոյնը կ'ըսեմ: Մենք այս աշխարհիս մէջ յաւիտեան ապրելու չենք: Ի՞նչ է կեանքերնիս: Ազուռ որ Ռուսիոյ ովկիանոսին մէջ կորսուած կաթիլ մը ջուր: Մենք անոր հողին վրայ չենք կրնար մնալ յաւիտեան, բայց անիկա պէտք է որ ապրի, բարգաւաճի, փայլի: Գիտեմ որ մենք պիտի մոռցուինք, ու մեր բարեբաստիկ սերունդները պիտի չյիշեն «Եղբայրական գերեզմանատան» մէջ (զինուորիներու գերեզմանատան մէջ) ննջողները: Համբոյքներով ու օրհնութիւններով ճամբուղի քեզ, Երբ մեծ գործ մը ի գլուխ հանելու զրկենք քեզ, իմ արցունքներս մի՛ յիշեր, այլ միայն տուած օրհնութիւնս միտքդ բռն: Աստուած հետիկդ ըլլայ, իմ սիրուն, իմ ուշիմ, աղուոր գաւակս: Ամէն տեղ կը գրուի թէ թշնամին շատ խիստ և բիրտ է: Բայց դուն կոյր վրէժխնդրութեամբ մի՛ վարուիր անոր հետ: Ինկածին չըլլա՛յ որ ձեռք վերցնես: Քու ձեռքդ ինկողներուն հետ անուշութեամբ վարուէ՛»:

ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻ Կապրիէլէ ա'Աննունցիոյ, արդի ապականեալ և ամբարտաւան ընկերու-

թեան ներկայացուցիչներէն մին, Վենետիկ քաղաքին մէջ, սաւառնորդութեան վրայ բա- նախօրութիւն մը ըրած պահուն, յանդիմե- ցաւ Աստուծոյ խօսքը ծագրելու, պոչելով. Փա՛նֆ մարդիւքեան, երկինքի բարձրերը: Մե- րունի մը այս անամէջ պոստախօսութիւնը լսելով, իսկոյն պոստախօսեց. Այն ահա, անընդհա՛ն խռովութիւն աշխարհի վրայ: Այն- պէս ալ եղաւ:

ԳՐԱԴԻՏ ԲՕԼ Ժինիսթի, որ բլուրի մը կա- տարէն կրցաւ դիտել ճակատամարտ մը, հե- տեւեալ կերպով կը նկարագրէ զայն. «Մեզմէ մէկ քիւմէզը հեռու գլորք բռնեցին Փրան- սական հրետանիները. բայց անոնց ներկա- յութիւնը յայտնի եղաւ միմիայն ռաբակոծու- թենէն: Զինուորական նկարիչ մը վերջերս դիտել կու տար թէ հիմակուան ճակատա- մարտը պարզապէս գիւղանկար մ'է ծուխի սիւներով: Շատ ճիշտ է ասիկա: Մեր հրե- տանիներուն վերեւ կեցած, այն ատեն միայն կրցանք նշմարել զանոնք, երբ ուռմբ ար- ձակելու սկսան: Բայց մեր ակնարկին ընդ- պրկած ամբողջ շրջանակին մէջ, չկար բան մը որ յայտնէր զիրար բղկեցնու կազմ ու պատրաստ հաղարաւոր մարզոց ներկայու- թիւնը: Թնդանութիւն գոռումը կը ցնցէր մեր խրճիթին ապակիները: Անվերջ որոտում մը, խլացուցիչ աղմուկ մը կը լսուէր: Ճերմակ ծուխի ամպեր կը տեսնուէին, որոնց մէջ կը պայթէին Փրանսական ռումբերը, իսկ զրե- թէ սեւ. ծուխի մէջ էր որ կը պայթէին գեր- մանական ռումբերը: Ի՞նչ քիչ, պուրակի մը հտեւ կը նշմարենք պահեստի զինուորներու խուժրեր: Միւսները ծածկուած էին խրամ- ներու մէջ, հանդէպ թշնամիին, որ նոյնպէս պահուրտած էր բնական ամրոցներու հտին: Տարօրինակ ապաւորութիւն մը կ'ունենայ շարդ ո՛չ մէկը նշմարելով միջոցի մը մէջ, ուր բունն պայքար կը մղուի: Կոխը հետ- զհետէ կը սաստկանայ: Յաջորդ օրը միայն կը լսենք թէ Գերմանք ճակատին վրայ քանի մը ժամուան մէջ 16000 ռումբ արձակած էին: Մահը կ'անցնի, ապանց իր զարհուրելի հունձքը նշմարել տալու: Ճակատամարտը

մէկէն ի մէկ չի պարզեր իր եղերական հան- զամանքը: Մեր աջ կողմի ճամբուն վրայ կ'երևի մոխրագոյն համազդեստ հագած Սե- նեկալցիներու զօրագունդ մը, որ նեղ գծով կը յառաջանայ գէպի Փրանսական հրետանի- ներն և մասերու բաժնուելով կը ցրուի հո- ղային պատնէշներու հտեւ: Այսպէս ամէնքն ալ կ'անհետանան ու կարծես թէ հողին հետ կը ձուլուին: Տպաւորիչ և տարօրինապէս հանդիսաւոր լուծիւն մը կը տիրէ: Եւ ահա նորէն կ'սկսին որոտումները, նորէն կը բարձրանան ծուխերն և կոխը կը վերսկսի նոր սաստկութեամբ մը:»

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Հոկտեմբեր 6ին Պորտոյի մէջ յանկարծական մահուամբ մեռաւ Ալալէր տը Մէօն Կոմսը, Ֆրանսայի Կաթոլիկէից ամենէն նշանաւոր երեսփոխանը:

Հանգուցեալին մասին հետեւեալը կը կար- դանք Գորրիէի Տէլլա Սէրա Թերթին Հոկտեմբեր 7 թիւին մէջ.

«Մեռաւ, կրնայ ըսուիլ, խրամին վրայ, խորհրդ- դարանական եւ օրագրական աշխարհի ամենէն հո- յակապ մարդիկներէն մին, Ալալէր տը Մէօն Կոմսը, մեծահամբաւ ճարտարախօսը, խորհրդարանի Աջա- կողմին Պետը: Անցեալ դիշեր շինաւ յանկարծ Պոր- տոյի մէջ: Կարկառուն դէմք մըն էր ան, որուն յօժարակամ յարգանք կ'ընծայէին ամենէն կա- տաղի հակառակորդներ անգամ:»

Ծնած էր 1841ին ալքուական տոհմէ մը. իր ուղղագիծ նախնեաց մէջէն երեւելի են Հիւլիտիոս, հանրագիտակ խոստատաւորը եւ ուրիշ մը, որ Ա Նաբոլէօնի Սենեկապետ եղած է: Երիտասարդ հասա- կէն մտաւ զինուորական ասպարէզին մէջ, եւ 1870ին պատերազմեցաւ զրահաւոր զինուորներու գնդա- պետի պաշտօնով: Նշանաւոր սպայ մըն էր. իր ճարտարախօսութիւնը միշտ մարտաշունչ դրոշմ մը ունէր: Կրօնական վերադարձնումի միջոցին, որ տեղի ունեցաւ պատերազմին եւ Հանրապետութեան (Commune) աղէտալի դէպքերէն ետքը, ինքզինքը նուիրեց Կաթոլիկէ ընկերային գործերու: Բարիզի զինուորական կառավարիչը, որուն քով կը պաշտօ- նավարէր, ուղից զանիկայ մայրաքաղաքէն հեռա- ցնել անոր եռանդը չափաւորելու համար: Ինք նա- խամեծար համարեցաւ զինուորականութենէ հրա- ժարիլ եւ քաղաքականութեամբ զբաղիլ:

1876ին խորհրդարան մտաւ եւ, կարճ ընդհա- տումէ մը զատ, շարունակ հոն մտաց Ծայրագոյն

Աջակողմը բաղմունքով Հոն մտաւ իբրեւ ներկայացուցիչ միապետական կոնսակցութեան. բայց 1892ին երբ Լեւոն Ժ. Յրանսայի կաթողիկէից կոչ մը ուղղեց Հասարակապետութեան յարեւոյ մասին, ինք յայտարարեց թէ կը հրաժարի լոկ քաղաքական խնդիրներէ եւ ինքզինքը կը նստի բացարձակապէս կրօնական շահերու պաշտպանութեան նոյն իսկ հասարակապետական գետնի վրայ: Այս կերպով եղաւ խորհրդարանին մէջ կաթողիկէութեան ախոյեանը:

Ինք ամենայանկողից եւ ամենէն ծափահարուած ճարտարախօսներէն մին եղաւ իր խօսքերուն վսեմութեամբը. բայց իր ձայնը շատ տարիներէ ի վեր մարած էր իր բաղմահատոր բանախօսութիւնները արժանացուցին զինքը պատիւներուն Յրանսայի Ակադեմիային, որուն կ'անդամակցէր 16 տարեի ի վեր: Զինքը հիւժող սրտի հիւանդութիւնը թէեւ զինքը հեռու կը կեցնէր երկարատեան ի վեր խորհրդարանի բեմէն, սակայն արգելք չէր ըլլար իրեն որ արդեամբ աշխատակցի պարբերական եւ ամենօրեայ թերթերու եւ ջերմ եռանդով պարզէ իր նախասիրած հարցը, որ էր բանուորական դասակարգին կաթողիկէ կազմակերպութիւն մը տալ:

Եւամեայ զինուորական ծառայութեան ջերմ պաշտպաններէն էր, ներկայ պատերազմին սկիզբէն՝ ամէն օր էզոյ սր Բարի թերթին մէջ յօդուած մը կը գրէր որուն մէջ կը փայլէր բոցավառ հայրենասիրութիւն մը. յօդուածն էր որոնք Սօրի Պարբէսի ամենօրեայ յօդուածներուն հետ ամենամեծ ընդունեւորութիւն գտան: Երբ կառավարութեան տեղափոխութեան հետեւանքով էզոյ սր Բարի իր գաւառական հրատարակութիւնը Պորտոյի մէջ սկսաւ հանել, ալ Մէօն կոմսը, իր Ակադեմիական ընկերը Բարիլ թողով ինք Պորտոյ գնաց իր յարատեւ աշխատակցութիւնը շարունակելու: Իր հոսկ վերջին յօդուածը, արտաքին կարգի վերականգնութեամբ մը, սա պարբերութեամբ կը սկսէր. Ամէնքը պարտական են ճնշել իրենց սրտին բաբախումները:

Իր երեք որդիները, որոնցմէ մին երեսփոխան է, պատերազմի առաջին գծին վրայ կը կռուին: Բաւական ատենէ ի վեր ասոնցմէ լուր չէր առած: Ասոնց մէկուն անակնկալ դարձը զինքը ինթարկեց այնպիսի յուզման մը որ այլ եւս չկրցաւ ինքզինքը դնել: Գրչի ճշմարիտ զինուոր մըն էր. եւ ամէն կոնսակցութեանց լրագրներ անխտիր յարգանքով կ'ողջունէին իր յիշատակը:

— Վատկանի եւ Հռոմի բոլոր շրջանակներուն մէջ մեծ ցաւ տարածուեց Սլաւեր տը Մէօն կոմսին մահը, որովհետեւ անով կ'անհետանար Յրանսայի կաթողիկէութեան ամենէն մեծ դէմքը:

*** Հանգուցեալ Գրգորիայի մահուան վրայ հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդեն իտալական թերթերը.

Հանգուցեալ Կարգինայը երբ հասկցաւ իր վիճակին ծանրութիւնը, բնաւ չայլալեցաւ. այլ մտքի կատարեալ հանդարտութեամբ եւ լրջութեամբ կանչել տուաւ իր խոստովանահայրը: Յետոյ ինքնեց վերջին Օծումը, որուն մատակարարութեան ատեն ինք պատասխանեց աղօթքներուն ա'յնքան խաղաղ եւ անխռով դէմքով որ ներկաները բռնն յուզում մը գգացին:

Սրբազան Հայրը Ն. Վ. Տէրութեան ծանր կացութիւնը լսելով իր Առաքելական Օրհնութիւնը ղրկեց անոր եւ միանգամայն յայտնեց որ նոյն օրուան պատարագը անոր համար պիտի մատուցուի:

Վսեմ. Կարգինայը մինչեւ իր վերջին շունչը անթերի պահեց իր մտքին պայծառութիւնը, պատկառաւոր հանդարտութեամբ խօսեցաւ իր խոստովանահօրը հետ վերահաս մահուան վրայ եւ ինքզինքը յանձնեց բոլորովին Աստուծոյ գթութեան: Անաւասիկ, ըսաւ խոստովանահօր. ձեռք սեղմելով, ինչպէս կը վերջանան աշխարհի պայտները... բայց ինչ գործիքի կ'ազդէ մարդու՝ երկինքի յոյսը:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆ. — Հոկտեմբեր 27ին, վարդապան՝ ամսուն վերջին Կիրակին ըլլալով, Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյ մէջ ձայնաւոր պատարագ մատուց նոյն եկեղեցւոյն Մեծաւոր Գեր. Կղեմէս Վ. Աստուրեան, վարդապանի ընկերութեան անդամներուն համար: Եկեղեցին լի էր հոծ բազմութեամբ: Նոյն օրը երեկոյեան ժամերգութեան վերջը վարդապանի ջերմեանդութեան վրայ հմտակց քարոզ մը խօսեցաւ Գեր. Կ. Վ. Աստուրեան: Ետոյ մեծ շուքով թափորի հանուցեալ վարդապանի սլաակերը: Հանդիսագիրն էր Ամեն. Հոգեւոր Տէրը, որ հագած էր իր Հայրապետական զգեստները: Արհի. Արհի. Ռոքոսեան եւ Սիսեան Գերապայծառները եւ բազմաթիւ Գեր. Գեր. վարդապետներ եւ ստուար բազմութիւն մը տիրացուներու եւ ժողովրդեան կը մասնակցէին թափորին, որ պատկառաւոր կերպով տեղի ունեցաւ եւ վաղուցեալ Ս. Հաղորդութեան Օրհնութեամբ, զոր տուաւ Ն. Գերբերջանիկութիւնը:

*** Նոյեմբեր 5ին, առաւօտեան ժամը 8.45, Ս. Ա. աթոռանիստ եկեղեցւոյն մէջ Պատարագ պիտի մատուցուի եւ հանգստեան պաշտօն պիտի կատարուի Բարեյիշատակ Հասուն Կարգինային հոգւոյն համար: Նոյն օրը տեղի պիտի ունենայ նաեւ Աւագ Թեմի քահանայից ամսական կրթութիւնը, եւ անկէ յետոյ՝ բարոյական դիպուածներու ժողովը:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Գաւառներն հրահանգ ղրկուեցաւ թէ մինչեւ որ գէորի տակ առնուողներու կարօտ ընտանիքներուն

թողականները սահմանափակ, թաղապետական կազմակերպությունները եղած տեղերը՝ թաղապետություններն եւ չգտնուած տեղերն ալ ծերոց ժողովներն հոգան անոնց աստիճանները՝ ըլլալիք ծախքը յետոյ սահմանափակութեամբ ամսաթուղթներէն ստացուելով։ Թէ՛ Գ. Պոլսոյ եւ թէ՛ գաւառներուն մէջ զինուորական, քաղաքային, ու երեսակաւ մէյմէկ պաշտօնեայէ յանձնաժողովներ կազմուեցան, որպէս զի այս մասին թերացող պաշտօնեաներու նկատմամբ քննութիւն կատարուելով պատժուին։

*** Պոլսէն կը գրուի «Նայէ Ֆրայէ Բեհէ»-ի — Բ. Դուռը գանդատեցաւ Եգիպտական կառավարութեան մօտ որ գերման եւ աստրիական հիւպատոսները վտարուեցան, հակառակ միջազգային իրաւանց, եւ Եգիպտոսի մէջ տնօրինութիւններ եղան հակառակ Օսմ. տէրութեան վեհապետական իրաւունքներուն։ Բաց աստի, Բ. Դուռը պահանջեց որ պարսկական ծովային ուժեր մէջ գտնուած անգլ. երկու թորփիլանները անկէ հեռանան։ Անգլ. արտաքին գործոց նախարարութիւնը թէեւ ծանոյց որ թորփիլաններն անկէ հեռանան, բայց չի յայտնեց թէ ե՛րբ։ Հնդկ զինուորները Եգիպտոսէն ամբողջովին կը հեռացուին եւ անոնց տեղ անգլիական զօրք կը դրուի։ Կ'ըսուի թէ Եգիպտոսի պահպան զօրքը բարձրացեր է 50000 հոգի։ Այս պատճառաւ Աւստրալիայէն զրկուած օգնական ոյժը չէ տարուեր Եւրոպա եւ վար դրուեր է Եգիպտոս։

*** Հոկտ. 27ին Կէս գիշերէն հինգ վայրկեան ետքը Կ. Պոլսոյ մէջ երկրաշարժի զօրաւոր ցնցում մը զգացուեցաւ, որ բարեբախտաբար անեական չէր։ Ծնցումներն աւելի հարաւակողմէն զգացուեցան եւ նախապէս ստորերկրեայ ձայներ լսուեցան։

— Նոյնպէս Իտալիոյ Ֆլորէնցա, Լիվօռնօ, Րիմա, Ս'ասա, Պօլօնիա, Վինետիկ, Թօրինօ, Սիլանօ, Ճենովա եւ այլ շատ մը քաղաքներուն մէջ երկրաշարժի ցնցումներ զգացուեր են նախընթաց օրը ժամը 10.20ին եւ իսկապէս պատճառներ են ժողովուրդին, քանի մը քաղաքներու մէջ թեթեւ վնասներ միայն պատճառուելով։

*** Պերլինէն եւ Վիեննայէն եկած հեռագիրներ պաշտօնապէս կը հաստատեն թէ աստրեւագերման միացեալ գործողութիւնները Բոլնիոյ մէջ չեն յաջողած, ռուս բանակին թրակաւ անհաւանութեան եւ դիրքին նպաստաւոր ըլլալէն հետեւանքով։

Արեւմտեան ռազմադաշտին վրայ ալ շրջառիկ պատերազմը կը շարունակուի, օրական հազարաւոր զոհեր հնձելով։ Երկու կողմէն ալ տակաւին ո՛չ մէկ յաջողութիւն ձեռք բերուեցաւ։ Անգլիական պաշտօնական զեկոյց մը կը յայտարարէ թէ՛ ներկայիս մղուող պատերազմին մէջ, պիտի յաղթէ այն կողմը, որ իր կորուստները դարձանելու դիւրութիւնն ունի եւ կրնայ կամակոր դիմադրութիւն ընել։

— Այս ահուկ արիւնահեղութեանց մէջ ռուս զօրքաւ վերջին դէպքն է Իտալիոյ Պալաններուն մէջ ռոք դնելը, Վալտիայի գրաւմամբ։

— Ռուսօյէ Սլովօ լաւատեղեակ աղբիւրէ կ'իմանայ թէ Իտալիոյ եւ Յունաստանի միջեւ համաձայնութիւն գոյացուած է ալպանական խնդրոյն համար։

*** Աւստր. պաշտօնական զեկոյցը կ'ըսէ. — «Հոկտ. 27ին աստր. զօրքը նոր յաջողութիւններ ունեցաւ Սերպիոյ մէջ եւ թշնամիին արիւմտար կատարած մէկ դիմադրութենէն ետք գրուեցին Ռաւինիէն եւ շատ ամրացած սերպ դիրք մը նաւթվայի մարդին մէջ, գերի բռնելով, սերպ 5 սպայ եւ 500 զինուոր, եւ գրաւելով 4 թնդանօթ, 8 խորտընկէց եւ շատ մը նիւթեղէն։ Իսկ Բոլնիոյ մէջ՝ Աւստրիական զօրքը ստիպուեցաւ նահանջել։

Բօքէնհայ, 27 (Ի. Դ.). — Գերմանական կորուստներու վերջին ցանկը, որ կը պարունակէ մինչեւ Սեպտ. 15ի կորուստները, ցոյց կուտայ՝ 250,000 հոգի կորուելու անկարող վիճակի ենթարկուած։ Ասոնց 38,500ը սպանուած է, 159,000 վիրաւոր, 50 հազար հոգի անհետացած կամ գերի։

Թրիեքէ, 25. — Ռօթէրոմէն կը հեռագրուի Բիթօլի թէ Բալէի հրամատարը 6 ժամ միջոց տուաւ ժողովուրդին որ պարպէ արտաքին ամրութեանց մասը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատիւաբաւական Սիւնիդոս	689
Դէպքեր եւ սկզբունքներ	691
Յիսուս Բրիսոս	694
Եօթնեակ Բրիսոսնէի	695
Հիմ վաւերաբույրքեր	697
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	698
Այլեւայլ	699
Տեղեկագրական	702

ԱՐՏՈՂԱՏԵՐ

ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆԳՐԱԳԵՏ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՏԵԱՆ

Տպարան Կ. Առաջադեմ Զարգացեալ, Բերա, Պարսկ փողոց թիւ 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ. —Արսաւան-
ման տար. ֆր. 10. վեցամս 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, 4.

Գոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրաւ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճշիւ և ի վիճակի է՝ որ և իցէ տպագրական գործաց համար: Կը տպուին ամեն տե-
սակ՝ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէժներ,
մահադիւանք, եւն. Գիւնը ամսացելի կերպով ածան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ գահ պիտի
ձեռն:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE 1. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Brünn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitz, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwettau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakouy

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Verein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.